

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի օգոստոսի 19-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2016 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի ստուգարքների և քննությունների կազմակերպման հարցը:
2. Վիճակագրական վարչություն ուսանողների վերաբերյալ տվյալների ներկայացման մասին:
3. 2016 ուսումնական տարվա շրջանավարտների տվյալների ներկայացման մասին:
4. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2017 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին- 2016 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի ստուգարքների և քննությունների կազմակերպման հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուսուրյան/:

Նշվեց, որ 2016 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի կազմակերպման նպատակով ամբիոնների և դեկանատների հետ փոխհամաձայնեցման կարգով կազմվել է ժամանակացույց և ներկայացվել հաստատման: Քննական ժամանակացույցը հաստատվելուց հետո տեղակայվել է ԳՊՀ պաշտոնական կայքում:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2017 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուսուրյան/:

Քննարկվեցին ուսումնական պլանները:

Որոշեցին – Մասնագիտությունների ուսումնական պլանները ներկայացնել արտաքին փորձագետների քննարկմանը, իսկ մասնագիտությունների ուսումնական պլանները ամբիոններում քննարկելուց հետո՝ ներկայացնել հաստատման:

Լսեցին- Վիճակագրական վարչություն է ներկայացվել տվյալներ 2016 ուսումնական տարվա ուսանողների և նրանց շարժի վերաբերյալ, ինչպես նաև համաձայն ՀՀ ԿԳՆ գրության՝ ներկայացվել են 2016 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփ տվյալները:

Քննարկվեց սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների հարցը:

Որոշեցին – կազմել այն ուսանողների ցանկը, որոնց ընտանիքները գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և ներկայացնել ռեկտորատ՝ սահմանված կարգով նյութական օժանդակության նպատակով:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուսուրյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան